

ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Մարտի 13-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում տեղի է ունենում մասնավոր վարդապետական գավազանի իշխանության տվչություն:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Մայր Աթոռում ուխտավորաբար գտնվող Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ և Ժառանգավորաց վարժարանի տեսուչ տ. Շահե արքեպ. Աճեմյանը մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն է շնորհում Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ տ. Տիրան աբղ. Կյուրեղյանին, տ. Թորգոմ աբղ. Մուշեղյանին և տ. Մոմիկ աբղ. Սարգսյանին:

Մայր Աթոռի երիտասարդ միաբանները նախապես իրենց վարդապետական թեզերն էին ներկայացրել Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբության հանձնարարությամբ կազմված հանձնաժողովը, որի կազմում էին ս. Գեղարդ վանքի վանահայր տ. Վահան եպս. Տերյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր ու հոգևոր ճեմարանի դասախոս Արթուն Հատիտյանը և Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար ու հոգևոր ճեմարանի դասախոս Պարգև Շահբազյանը, քննելով ավարտաճառերը, իրենց զեկուցագիրը ներկայացրել էին Վեհափառ Հայրապետին:

Ժամը 12-ին Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում սկսվում է «Կանոն մասնաւոր իշխանութեան» տվչության կարգի արարողությունը:

Խարտավիլակի պաշտոնը կատարում է տ. Մասիս վրդ. Գալստյանը: Արարողությանը ներկա են լինում Շիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպս. Շաքարյանը և վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպս. Սերայդարյանը:

Արարողության ավարտին տ. Շահե արքեպ. Աճեմյանը շնորհավորում է նորընծա վարդապետներին և իր բովանդակալից խրատականում շեշտում՝ հայ եկեղեցու կյանքում վարդապետի նվիրական կոչման կարևորությունը հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր դաստիարակության գործում:

Վերադառնալով Մայր Աթոռ, նորընծա վարդապետները ներկայանում են Վեհափառ Հայրապետին՝ ստանալու Նորին Սրբության օրհնությունն ու շնորհավորանքը:

Նորին Սրբությունը հայրական ջերմ սիրով ընդունում է նորընծա վարդապետներին, շնորհավորում նրանց վարդապետական աստիճանը և բարեմաղթում, որ նրանք լինեն «մշակք առանց ամօթոյ»՝ Տիրոջ այգու ծառայության գործում:

*
* *

Տ. Տիրան վրդ. Կյուրեղյան

Ավազանի անունով՝ Ղազարոս:
Ծնվել է 1948 թ. սեպտեմբերի 2-ին Կիպրոսի Նիկոզիա քաղաքում, արհեստավորի



ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի Մելիքյան-Ուզունյան ազգային վարժարանում: 1962 թ. ընտանիքի հետ ներգաղթել է Հայրենիք, հաստատվել Կիրովական քաղաքում և ուսումը շարունակել տեղի № 18 միջնակարգ դպրոցում:

1964 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան և 1970 թվականին ավարտել: Դիպլոմային աշխատանքի նյութն է եղել «Տարոնի սրբավայրերը»:

1968 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1972 թվականին՝ աբեղա:

Վարդապետական թեզն է՝ «Դվինի հայրապետանոցում կազմված երեք ժողովածուները»:

Տ. Տիրան վարդապետը նշանակվել է առաջնորդական փոխանորդ Ռուսաստանի հայոց թեմի:

*
* *

Տ. Թորգոմ վրդ. Մուշեղյան

Ավազանի անունով՝ Արտաշես:
Ծնվել է 1947 թվականի մարտի 22-ին Երևանում: 1957—1967 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, միևնույն ժամանակ աշխատել ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի կից երկրաբանական ինստիտուտում որպես լաբորանտ:

1967 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան և 1969 թվականին ավարտել: Դիպլոմային աշխատանքի նյութն է եղել «Հայ տոմարագիտության պատմությունը և Սիմեոն Երևանցու տոմարագիտական աշխատությունը»:

1969 թվականին ձեռնադրվել է սարկավագ, իսկ 1974 թվականին՝ աբեղա:

Վարդապետական թեզն է՝ «Տիեզերագիտությունը հայ եկեղեցական մատենագրության մեջ»:

Տ. Թորգոմ վարդապետն այժմ Մայր տաճարին առընթեր եկեղեցական արվեստից թանգարանի վարիչն է:

*
* *

Տ. Մոմիկ վրդ. Սարգսյան

Ավազանի անունով՝ Հարություն:

Ծնվել է 1950 թվականին Լենինականում, քահանայի ընտանիքում: 1968 թվականին ավարտել է տեղի մ.ջնակարգ դպրոցը և 1969 թ. ընդունվել հոգևոր ճեմարան ու 1974 թվականին ավարտել: Ավարտաճառի թեման է եղել «Խրիմյան Հայրիկը որպես դաստիարակ»:

1970 թվականին սարկավագ է ձեռնադրվել, իսկ 1975 թվականին՝ աբեղա:

Վարդապետական թեզն է՝ «Հայ և լատին եկեղեցիների հարաբերությունները կիլիկյան շրջանում»:

Տ. Մոմիկ վարդապետն այժմ Վեհափառ Հայրապետի գավազանակիրն է:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է Մայր Աթոռի երիտասարդ միաբաններին՝ մասնավոր վարդապետական իշխանություն ստանալու առիթով, և ցանկանում, որ նվիրումով ու անշահախնդրությամբ ծառայեն Հայաստանյայց առաքելական ս. եկեղեցուն և Մայր Աթոռ ս. Էջմիածնին: